ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 32

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. հունիսի 3 -ին կայացրած նիստի

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամները:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Եղեգնաձոր քաղաքի բնակչուհի Անժելա Հայկի Մալխասյանի դիմումն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ պետպատվերի շրջանակներում բուժման համար ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրանց ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Անժելա Մալխասյանին պետական պատվերի շրջանակներում համապատասխան բուժում ցուցաբերելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի /թիվ 17/ միջնորդագիրն ուղղված ՀՀ առողջապահության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ց.Բաբայան